Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/61576/02/22

ՎՃԻՌ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

13.03.2023թ. ք. Երևան

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան), հետևյալ կազմով՝

նախագահությամբ՝ դատավոր Ս. Երիցյանի

գրավոր ընթացակարգով քննելով քաղաքացիական գործը, ըստ հայցի <<Եթերակ>> ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00814405, պետական գրանցման համար՝ 264.110.824534, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Լեփսիուսի փ., 19 շ., բն. 54) (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարությանի (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մելիք Ադամյան փ. 1), Երևանի քաղաքապետարանի (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արգիշտի փ., 1) (այսուհետ նաև՝ Պատասխանողներ)՝ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՎՃՌԵՑ

1. <<Եթերակ>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել.

անվավեր ճանաչել <<Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին>> Երևանի քաղաքապետի 15.11.2022 թվականի թիվ 3937-Ա որոշումը:

2. <<Եթերակ>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության՝ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

3. Երևանի քաղաքապետարանից հօգուտ <<Եթերակ>> ՍՊԸ-ի բռնագանձել 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ, որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**